# «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-000164, 1-ին դաս
(սերիան, համարը, դասը)

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ
(քաղաքաշինության բնագավառում գործունեության տեսակը)

ՏՐՎԱԾ Է
2024-08-13, «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ
(լիցենզիան տալու տարեթիվը, ամիսը, օրը, քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը,

ՀՀ, ՇԻՐԱԿ, ԳՅՈՒՄՐԻ, ԳՅՈՒՄՐԻ, ՇԻՐԱԿԱՑՈՒ Փ., 83, 40 ԲՆ.
գտնվելու վայրը՝ այդ թվում, անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը և բնակության վայրը)

Գործողության ժամկետը՝ 13.08.2029թ.
(օրը, ամիսը, տարեթիվը)

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ UG64-CCB2-BF61-C171
Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

## ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

N 1/154 -26

**<<07>>_մայիսի_ 2026թ** **ԼԻՑ ՔՊԼ-000164, 1-ին դաս**

***Պատվիրատու՝ ԱՊԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ***

***Նախագծող՝ <<ՇԻՆԷՔՍՊԵՐՏ>> ՍՊԸ***

***Տնօրեն՝ Ե. ԱՍԱՏՐՅԱՆ***

**<<ԱՐԽԻՏԵԿՏ>> ՍՊԸ-ն Նախագծային փորձաքննությունը դիտարկելով ՀՀ Արագածոտնի մարզի, Ապարան համայնքի, Շենավան, Արագած, Վարդենուտ և Արայի բնակավայրերի տեղական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը՝ երաշխավորում է հաստատման:**

**Առդիր՝ եզրակացությունը 2 էջից:**

**Տնօրեն՝**  **Ն. Սիրեկանյան**

*«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ*

*տնօրեն Ն. Միրեկյան*

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<u>ՀՀ Արագածոտնի մարզի, Ապարան համայնքի, Շենավան, Արագած, Վարդենուտ և Արայի բնակավայրերի տեղական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը</u>

*Պատվիրատու՝ ԱՊԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ*

*Նախագծող՝ <<ՇԻՆԷՔՍՊԵՐՏ>> ՍՊԸ*

*Տնօրեն՝ Ե. ԱՍԱՏՐՅԱՆ*

Սույն նախագիծը կատարված է համաձայն Ապարան համայնքի ղեկավարի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի և պատվիրատուի կողմից տրված տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Նախատեսվում է ՀՀ Արագածոտնի մարզի, Ապարան համայնքի, Շենավան, Արագած, Վարդենուտ և Արայի բնակավայրերի տեղական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման աշխատանքների իրականացում:

Նախագծով նախատեսված է հետևյալ շինարարական աշխատանքների իրականացում՝ քանդման և ապամոնտաժման աշխատանքների կատարում, գրունտների մշակում մեխանիզմով՝ կուտակումով, մշակված գրունտի տեղափոխում, ավելացված գրունտի բարձում և տեղափոխում, հողածածկույթի հարթեցում մեխանիզմով: Խճավազային հիմքի իրականացում, մակերեսների մշակում բիտումային էմուլսիայով, խոշորահատիկ ներքին շերտի և մանրահատիկ վերին շերտի ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում: Իջատեղերի և լայնացումների կառուցման աշխատանքների իրականացում: Կողնակների կառուցում: Բազալտե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով, բետոնե դեկորատիվ սալիկներից մայթերի կառուցում, սիզամարգերի իրականացում: Դիտահորերի նիշերի ուղղում: Ջրահեռացման համակարգի կառուցում, հավաքովի երկաթբետոնե վաքերի տեղադրում, վաքերի ջերմամեկուսացում բիտումի մածիկով, մետաղական ցանցի պատրաստում և տեղադրում: Ճանապարհային նշանների տեղադրում և գծանշման իրականացում:

*Նախահաշվային մաս*

Աշխատանքների նախահաշվային արժեքը ներկայացված է ամփոփ հաշվարկով
Հաշվարկը կազմում է՝

**1. Շենավան բնակավայր - 441 762.39** հազար դրամ, ներառյալ ԱԱՀ:

**2. Արագած բնակավայր - 182 244.28** հազար դրամ, ներառյալ ԱԱՀ:

**3. Վարդենուտ բնակավայր - 114 989.37** հազար դրամ, ներառյալ ԱԱՀ:

**4. Արայի բնակավայր - 184 426.89** հազար դրամ, ներառյալ ԱԱՀ:

Հաշվարկը կատարված է 1984թ. նորմերով և գներով կազմված տեղային նախահաշիվների հիման վրա, կիրառելով աշխատավարձի հաշվարկային ինդեքսը **2427.42** և մեքենաների շահագործման ինդեքսը **2956.69**

Նյութերի արժեքն ընդունված է 2026թ. **N03** «Ինֆորմացիոն տեղեկագրի» տվյալներով :

1.Նախագծային լուծումները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին:

2. Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմյանց համապատասխան

3. Նախահաշվով նախատեսված ծավալները համապատասխանում են նախագծային ծավալներին

4.Աշխատանքային նախագծի կազմը համապատասխանեցված է ՀՀ քաղշին. նախարարի 11.09.2017 N 128-Ն հրամանով ամրագրված պահանջներին

5. Նախագծային լուծումներին առընչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփոխությունները, լրացումները, այլ ընտրանքային լուծումները քննարկվել են նախագծային կազմակերպության հետ համատեղ:

*Ուսումնասիրելով ներկայացված նախագիծ- նախահաշիվը*

Փորձաքննությունը երաշխավորում է փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին, նախահաշիվը կարող է սահմանված կարգով պատվիրատուի կողմից ներկայացվել համաձայնեցման և հաստատման:

*Տնօրեն՝* *Ն. Սիրեկանյան*